ԿԱՐՃԻՔ

ՏԱԹԵՎԻԿ ՍԼԱՎԻԿԻ ՄՈՎՍԻՍՅԱՆԻ <<ՀՀ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԿՐԹԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ>> ԹԵԿՆԱԾՈՒԱԿԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Բարձրագույն կրթության որակի ապահովումը Բոլոնիայի գործընթացի թիրախային ուղղություններից մեկն է, որն իր առանձնակի նշանակությունն ունի ԵԲԿՏ-ում բարձրագույն կրթության համակարգերի թափանցիկության ու հաշվետվողականության բարձրացման, ակադեմիական շարժունության ընդլայնման, շնորհված որակավորումների համադրելիության ու փոխճանաչման, կրթական ծառայությունների վերջնարդյունքների չափելիության ապահովման գործընթացներում: 2005թ.-ից մինչ օրս հետամուտ լինելով ԵԲԿՏ-ում տեղի ունեցող կրթական բարեփոխումների ընթացքին և իր ընդունած միջազգային պարտավորությունների կատարմանը, Հայաստանը քայլեր է ձեռնարկում որակի ապահովման գործընթացում եվրոպական չափանիշներին մոտենալու և դրանց կիրառության համար: Արդյունքում հիմնախնդիրների վերլուծության և լուծումների ուղիները դուրս բերելու, գործընթացի կարևորության և դերի ուսումնասիրմանն էլ վերաբերում է գրախոսվող ատենախոսությունը:

Տաթևիկ Մովսիսյանի թեկնածուական ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործած գրականության ցանկից, ծավալուն հավելվածից: Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 194 էջ: Աշխատանքում առկա են 11 աղյուսակ, 18 գծապատկեր:

Ներածության մեջ հեղինակին հաջողվել է հստակ հիմնավորել թեմայի արդիականությունը, ձևակերպված է նպատակը, դրանից բխող խնդիրները, պատշաճ ներկայացված է հետազոտության գիտական նորույթը, դուրս են բերված պաշտպանությանը ներկայացվող հիմնական դրույթները, հետազոտության տեսական ու գործնական նշանակությունը, ներկայացված է աշխատանքի կառուցվածքը և ծավալը:

Իր հետազոտության համար իբրև նպատակ ատենախոսը սահմանել է ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտի հիմնախնդիրների բացահայտումն ու ոլորտի հետագա զարգացմանն ուղղված նոր ուղիների առաջադրումը: Նպատակից բխում են 6 խնդիրներ, որոնց թվում՝ հետազոտությունների արդյունքների հիման վրա մշակել բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացների կազմակերպման մոդել, ինչն իր մեջ ամփոփում է հեղինակի բերած գիտական նորույթը: Անդրադառնալով գիտական նորույթին, պետք է ասել, որ այն շեշտադրում է կրթության որակի ապահովման օրենսդրական, ռազմավարական, գիտական մոտեցումների համապարփակ վերլուծությունների հիմքի վրա խնդիրների բացահայտումը, ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտի բացահայտված խնդիրների հիման վրա մշակված բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացների կազմակերպման նոր մոդելի մշակումը, ՀՀ բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրման նոր չափանիշների և չափորոշիչների, ՀՀ բուհերի ստորաբաժանումների ինքնավերլուծության ձևաչափը:

Պաշտպանության են ներկայացված հինգ դրույթներ, որոնք ցույց են տալիս ատենախոսի հետազոտական աշխատանքի ուղղությունները: Տեսական և գործնական նշանակության վերլուծության մեջ երևում են ծավալուն աշխատանքի տեսագործնական հիմնավորումները և կիրառական նշանակությունը:

Հետազոտության առաջին գլուխը, որի վերնագիրն է <<Բարձրագույն կրթության որակի ապահովման գիտատեսական հիմքերը>> բաղկացած է հինգ ենթագլխից: Դրանցում ատենախոսին հաջողվել է մանրամասն ներկայացնել և վերլուծել բարձրագույն կրթության որակի ապահովման հասկացութային շրջանակը, որակի ապահովման համակարգի կառուցվածքը, ինչպես նաև բարձրագույն որակի ապահովման մոդելների գործնական սկզբունքներն ու առանձնահատկությունները, արտաքին ապահովման միջազգային փորձը: Հարուստ գիրտական գրականության վերլուծություններով, մեջբերումներով, սահմանումներով, աղյուսակներով և

գծապատկերներով հեղինակին հաջողվել է վերլուծել բարձրագույն կրթության որակի ապահովման գիտատեսական հիմքերը: Հատկապես արժեքավոր է ատենախոսի կողմից բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացների պատմական զարգացմանը հատկացված ուշադրությունը համեմատությունների և հարադրությունների, զուգադրումների մեթոդներով, որտեղից երևում է այս կարևոր գործընթացի էվոլյուցիոն ընթացքը:

Այս գլխում ատենախոսը հատուկ անդրադարձել է բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգի կառուցվածքին գծապատկերով և վերլուծության մեջ նշել.<<Որակի ներքին և արտաքին ապահովման համակարգերի զարգացման գործում որոշիչ են բարձրագույն կրթության սուբյեկտների կողմից որդեգրած քաղաքականությունները և ռազմավարությունները, որոնք բխում են որակի ապահովման գործընթացների նպատակներից>>/էջ 32-33/:

Աշխատանքում ներկայացված է որակի արտաքին և ներքին ապահովման գործընթացների փաստաթղթային հենքը, վերլուծված են ապահովման մեխանիզմների լիցենզավորման, աուդիտի, հավատարմագրման և արտաքին մշտադիտարկման գործընթացները: Արժեքավոր պետք է համարել այն հանգամանքը, որ հետազոտողը համեմատական վերլուծությունների միջոցով բացահայտում է գործընթացի առանձնահատկությունները գլոբալ առումով: Գիտամանակավարժական գրականության ուսումնասիրության հիման վրա նրան հաջողվում է դուրս բերել ինքնավերլուծության մոդել, որում երևում է որակի կառավարման ալգորիթմը՝ -ներդրում-գործընթաց-ելք-արդյունք/էջ 40, գծ. 3/: Հատկապես արժեքավոր պետք է համարել ատենախոսության շրջանակներում հեղինակի շրջահայաց մոտեցումները, այն է՝ վերլուծել բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտում կիրառվող տարբեր մոդելներ, դուրս բերել դրանց նմանություններն ու տարբերությունները, բացահայտել առանձնահատկությունները: Քննության են ենթարկվել Մալքոմ Բոլդրիջի գերազանց կատարողականության ամերիկյան մոդելը, Որակի կառավարման եվրոպական հիմնադրամի

գերազանցության մեթոդը, գնահատման ընդհանուր շրջանակի մոդելը: Ատենախոսի կողմից մանրամասն քննության է արժանացել նաև որակի արտաքին ապահովման թվարկյալ երկրների՝ ԱՄՆ, Նիդերլանդներ և Ֆլանդրիա, Գերմանիա և Մեծ Բրիտանիա միջազգային փորձը որպես արդյունավետ ռազմավարական կառավարման ձևաչափեր: Մանրամասն վերլուծություններն ու համեմատությունները արժեքավոր են դարձնում ուսումնասիրության արդյունքում ատենախոսի ամփոփումները, որտեղ հեղինակը նշում է, որ նմանությունները հիմնականում համադրելի են, սակայն տարբերությունները պայմանավորված են որակի ապահովման և ազգային կրթական համակարգերի առանձնահատկություններով: Աշխատանքում ներկայացված է նաև :

Ատենախոսության երկրորդ գլուխը, որը վերնագրված է <<ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգի ձևավորման ու զարգացման ռազմավարական մոտեցումները>>, բաղկացած է երեք ենթագլխից, որոնցում քննվում և վերլուծվում են այնպիսի կարևորագույն հարցեր, ինչպիսիք են՝ ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային շրջանակի ձևավորման և զարգացման նախադրյալները, ՀՀ-ում բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտի պետական ռազմավարական մոտեցումները, ՀՀ բարձրագույն կրթության սուբյեկտների ռազմավարական մոտեցումները որակի ապահովման ոլորտում: Այս կարևոր ուղղություններով ուսումնասիրությունը զարգացնելով ատենախոսին հաջողվում է ուղղորդել իր կողմից մշակած հարուստ նյութը ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման համակարգի մանրամասն վերլուծությանը, որի արդյունքում հստակ երևում են թույլ և ուժեղ կողմերը, զարգացման հեռանկարները: Ատենախոսը նկատում է, որ <<Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն>> հիմնադրամի /ՈԱԱԿ/ ստեղծումից հետո 2008թ-ին պաշտոնապես մեկնարկելով ՀՀ Որակի ազգային ապահովման շրջանակի ձևավորումը, որակի արտաքին ապահովման շրջանակում առաջնահերթություն համարվեց ինստիտուցիոնալ կառավարման քաղաքականությունը երեք կարևոր

ուղղություններով՝ ռազմավարական կառավարում, որակի ապահովում, փաստահեն որոշումների կայացում, որոնք կիրարկվում են որակի արտաքին ապահովման մեխանիզմներով՝ լիցենզավորում, ինստիտուցիոնալ և ծրագրային հավատարմագրումներ, մշտադիտարկում: Ատենախոսը այստեղ օրենսդրական, իրավանորմատիվային ձևակերպումների և գործընթացի հասունացման միջև որոշակի պատճառականություն է տեսնում գործընթացի արդյունավետության տեսանկյունից: ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտի պետական ռազմավարական մոտեցումներին անդրադարձ կատարելով, այն դիտարկում է ազգային և հատկապես կրթական անվտանգության համատեքստում՝ համարելով , որ ցանկացած երկրի բարձրագույն կրթության համակարգի ստեղծումը, գործառումը, կրթական ծառայությունների որակի բարձրացումը հիմնականում պայմանավորված են այդ պետության որդեգրած կրթական քաղաքականությամբ/էջ 82/: Ատենախոսը հաջողությամբ վերլուծում է ՀՀ կրթության համակարգի աստիճանական զարգացման ընթացքը, եվրոպական չափանիշներին համապատասխան կրթության համակարգի վերակառուցումը և հայաստանյան կրթության միջազգայնացմանն ու մրցունակության բարձրացմանն ուղղված քայլերը՝ քննելով մինչև 2030թ.-ը Կրթության զարգացման պետական ծրագիրը, նկատելով, որ այն ևս զերծ չէ թերություններից, և երկրում կրթության բարեփոխումները ենթադրում են փոխհամաձայնեցված և փոխլրացնող պետական ծրագրեր/էջ 93/:Այնուհետև դիտարկելով ՀՀ բարձրագույն կրթության սուբյեկտների ռազմավարական մոտեցումները որակի ապահովման ոլորտում, նշվում է, որ ռազմավարական կառավարումն ու որակի ապահովումը, որպես բուհերի կատարողականի բարձրացման երկու կարևորագույն և փոխլրացնող գործընթացներ, ենթարկվում են արտաքին և ներքին միջավայրերի ազդեցության, մրցակցային դաշտի, հիմնախնդիրների թիրախավորման տիրույթում: Հենց դրանով էլ ատենախոսը պայմանավորում է իրատեսական պլանավորման կարևորությունը և բուհերի ռազմավարական զարգացումը: Նա կարողանում է հաջողությամբ աղյուսակի միջոցով դասակարգել ՀՀ որակի արտաքին ապահովման համակարգի

հիմնախնդիրներն ու զարգացման ուղղությունները/էջ 96, Աղյուսակ 5/: Հատկապես ուշագրավ է ատենախոսի հետազոտությունը՝ կապված ՀՀ բարձրագույն կրթության որակի ներքին ապահովման ռազմավարական մոտեցումներին, որի համար ուսումնասիրվել են ՀՀ տասներկու բուհ: Մանրամասն տվյալագիտական, փաստաթղթային հետազոտությունների արդյունքում ատենախոսը պարզել է, որ ՀՀ բարձրագույն կրթության սուբյեկտների ռազմավարական կառավարման և որակի ապահովման գործընթացների միջև փոխկապակցվածության բացակայություն կա, որոշ դեպքերում նաև՝ փաստաթղթային հենքի և ՈՆԱ գործող համակարգերի անհամապատասխանություն:

Ատենախոսության երրորդ գլուխը, որի վերնագիրն է <<ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտի արդի հիմնախնդիրներն ու զարգացման հեռանկարները>>, ամփոփիչ և կարևոր բացահայտումներով հարուստ ուսումնասիրությունների համահավաք կարելի է համարել, որը բաղկացած է 4 ենթագլխից: Այստեղ ներկայացված և վերլուծված են ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտի օրենսդրական կարգավորման հիմնախնդիրները կրթական բարեփոխումների համատեքստում, ՀՀ բուհերի որակի ապահովման հիմնախնդիրները ԵԲԿՏ-ին ինտեգրման համատեքստում, ՀՀ բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի կազմակերպման և իրականացման արդյունավետության գնահատումը, ինչպես նաև խորը վերլուծությունների հիմքի վրա ամփոփ ներկայացված է ատենախոսի կողմից մշակված ՀՀ-ում բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացների կազմակերպման մոդելը: Նախ պետք է ասել, որ ատենախոսին հաջողվել է կատարել կրթության որակի ապահովման ոլորտում օրենսդրական հիմքերի վերլուծություն և հիմնավորել, որ գործող օրենքներում կրթության որակին վերաբերող հասկացությունները ժամանակավրեպ են, չեն համապատասխանում ներկա իրողություններին, գործող օրենքով սահմանափակվում են ՀՀ որակի ապահովման գործընթացները, տուժում են բարձրագույն կրթությանն ուղղված միջոցառումները: ՀՀ

բուհերի որակի ապահովման հիմնախնդիրները ԵԲԿՏ-ին ինտեգրման համատեքստում հասկանալու համար ատենախոսը համեմատել և վերլուծել է որակի ապահովման եվրոպական և հայաստանյան չափանիշները: Ատենախոսի կողմից ուսումնասիրության են ենթարկվել հատկապես ՀՀ ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշները, քանի որ ՀՀ ում ծրագրային հավատարմագրում իրականացվում է կամավորության սկզբունքով: Վերլուծության են ենթարկվել ՀՀ տասնհինգ բուհերի ինքնավերլուծություններն ու փորձագիտական զեկույցները տասը չափորոշիչներով, որոնց մանրամասն քննությունը եզրափակում է երրորդ գլխի երկրորդ ենթագլուխը: Այստեղ բացահայտած խնդիրների պատճառականությունն ուսումնասիրելով, ատենախոսը պնդում է, որ դրանք թույլ չեն տալիս ամբողջովին ապահովել բարձրագույն կրթության համակարգի առաջանցիկ զարգացումը, շարունակական բարելավումը, ՀՀ որդեգրած միջազգային պարտավորությունների կատարումը: ՀՀ բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի կազմակերպման և իրականացման արդյունավետության գնահատման համար հետազոտողը 2022թ.-ի հոկտեմբերի 4-ից 15-ն ընկած ժամանակահատվածում իրականացրել է հարցումներ և ոլորտի ներկայացուցիչների հետ հարցազրույցներ, որոնց թվում են տանչորս բուհերի ՈԱ պատասխանատուներ, հավատարմագրման գործընթացում ներգրավված տասը փորձագետ, ընտրված բուհերից վեցական ՊԴ կազմի ներկայացուցիչներ: Մշակվել է ծավալուն հարցաթերթ, որն ընդգրկված է ատենախոսության Հավելված բաժնում: Հարցաթերթում ներառված հարցումներն ընդգրկում են ատենախոսի ուսումնասիրության ընթացքում կատարած վերլուծությունների և մի շարք խնդիրների վերհանման հիմնավորումները, որոնք շատ կարևոր կապերով կապակցում են տեսական մասի վերլուծության արդյունքում բացահայտած խնդիրները գործնական հիմնավորմամբ: Հարցումների արդյունքները վերլուծվել են երեք փուլով՝ հավատարմագրման նախապատրաստական փուլ, փորձաքննության փուլ, հետհավատարմագրման փուլ: Առաջին փուլի համար նախատեսված հարցերի վերլուծության արդյունքում ատենախոսը նկատում է, որ

հավատարմագրման դիմում -հայտի լրացման դժվարություններ չկան, սակայն առկա են ինքնավերլուծության ձևաչափի կառուցվածքի և բովանդակության խնդիրներ, որոնք առաջարկում է վերանայել՝ չափորոշիչների և մեկնաբանությունների հստակեցման, կրկնությունների բացառման, գերատեսչական բուհերի առանձնահատկությունների և պետական փաստաթղթերի հաշվառման վրա: Փորձաքննության փուլից դուրս բերված խնդիրների մեջ ըստ հարցման արդյունքների, ակնհայտ է դառնում, որ կրթական ծրագրերը գնահատող փորձագետները ոչ միշտ են առաջնորդվում ուղղորդող փաստաթղթերով/ՈԱՇ, ԿՓԵՀ օրինակելի կարգ , ուղեցույց և այլն/, բացակայում են զեկույցներում դիպլոմի հավելվածի կիրառման արդյունավետության վերաբերյալ տեղեկությունները և այլն: Հարցման արդյունքները ցույց են տալիս , որ բուհերի մեծ մասը ծանոթ չէ հավատարմագրման չափանիշների նպատակներին, ինչը թույլ չի տալիս ճշգրիտ ներկայացնել չափանիշների տակ ենթադրվող տեղեկատվությունը: Հետհավատարմագրման փուլի վերլուծության արդյունքերը ցույց են տալիս, որ ՈԱԱԿ-ի կողմից իրականացվող ընթացիկ մշտադիտարկումները աջակցություն են բուհի որակի ներքին ապահովման կառույցների գործունեության բարելավման, սակայն այցերի տևողության պակասը և բուհերի համապատասխան հաշվետվություններ չներկայացնելը նվազեցնում են մշտադիտարկումների արդյունքների արդյունավետությունը:

Այս ենթագլխում ատենախոսը աչքի է ընկնում հետազոտական կարողություններով: Նրան հաջողվել է ամբողջացնել հիմնախնդի հետ կապված տեղեկատվությունը, մանրամասն և բազմակողմանի վերլուծել հարցումների արդյունքերը և դիտարկումների հիմքի վրա առաջադրել ՀՀ-ում բարձրագույն կրթության որակի ապահովման գործընթացների կազմակերպման արդյունավետ մոդել, որը բխում է ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման օրենսդրական և ռազմավարական խնդիրերը թիրախավորելու նպատակադրումից և կարող է ուղղորդող գործիք դառնալ կրթության որակի ապահովման հիմնախնդիրներով զբաղվող սուբյեկտների համար: Մոդելը որակի ապահովման գործընթացի

կազմակերպումը դիտարկում է համակարգային տեսանկյունից, որի յուրաքանչյուր մակարդակ հիմք է մյուս մակարդակի համար: Ներկայացված են նաև մոդելի գործարկման համար արված տասնմեկ կետից բաղկացած առաջարկություններ և ՀՀ բուհերի ինստիտուցիոնալ հավատարմագրման գործող ու առաջարկող չափանիշներն ամփոփոխ աղյուսակ:

Հետազոտություն ավարտվում է 9 կետից բաղկացած եզրակացություններից, որոնք ատենախոսության առաջադիր խնդիրներից բխող հիմնավորումներ են :

Օգտագործած գրականության ցանկում ներառված են 121 աղբյուր՝ հայերեն, անգլերեն, ռուսերեն լեզուներով, առկա են 30 համացանցային աղբյուրներ ևս: Հավելվածն առանձնահատուկ ուշադրության արժանի աշխատանք է, որին հղումներ կան աշխատանքի տարբեր հատվածներում:

Տաթևիկ Մովսիսյանի <<ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման հիմնախնդիրների լուծման ուղիները կրթական բարեփոխումների համատեքստում >> խորագրով հետազոտությունն ունի կուռ կառուցվածք, աշխատանքի գլուխների և ենթագլուխների միջև տրամաբանական հաջորդականությունն ապահովված է: Հիմնախնդրի կարևորությունը մեկնաբանված է բազմակողմանիորեն, կան անհրաժեշտ առաջարկություններ համակարգային բարելավման համար:

Այնուամենայնիվ, ներկայացնենք որոշ դիտարկումներ.

1. Բուհ հապավման փոխարեն կարելի էր կիրառել մուհ հապավումը:
2. Յուրաքանչյուր առիթով հապավումների առաջին կիրառությունների համար միշտ պետք է օգտագործել դրանց բացված տարբերակները,
3. Շահեկան կլիներ 3.2 ենթագլխում արված ծավալուն հետազոտությունների արդյունքները ամփոփվեին նաև գծապատկերներով:
4. Լավ կլիներ ՀՀ-ում բուհի որակի ապահովման համար արված առաջարկությունները նշվեին թվագրված:

Սակայն մեր նկատառումներն ամենանին չեն ստվերում աշխատանքի գիտական բարձր արժեքը:

Տաթևիկ Մովսիսյանի <<ՀՀ բարձրագույն կրթության որակի ապահովման հիմնախնդիրների լուծման ուղիները կրթական բարեփոխումների համատեքստում >> խորագրով ԺԳ 00.01 <<Մանկավարժության տեսություն և պատմություն>> մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը բավարարում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ ատենախոսն արժանի է իր հայցած մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝ Լ. Խ. Հայրապետյան
Մանկ. գիտ.թեկնածու, դոցենտ

Դոց. Լ. Խ. Հայրապետյանի ստորագրությունը

Հաստատում եմ՝
Երևանի պետական համալսարանի
գիտական քարտուղար ,
բանասիր. գիտ. թեկնածու, դոցենտ Մ.Վ. Հովհաննիսյան

28 մարտի, 2023թ.